



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նիզամի  
☒ Հեռ. (0236) 4-34-42

« 25 » նոյեմբեր 2013 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՆՈ 19

ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ\_Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՆ ԵՎ  
ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական տուրքեր և վճարների մասին» օրենքի 8, 10 հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18-19 կետերի պահանջով

Ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել Նիզամի համայնքի 2014թ-ի տեղական տուրքերը և վճարները հետևյալ դրույքաչափերով:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների / նեոարյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանում հիմնական օբյեկտների համար՝
  - ա/ Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար -15000/ տասնհինգ հազար դրամ:
  - բ/ Մույն կետի « ա » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
    - բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 20000 / քսան հազար/ դրամ:
    - բբ/501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 30000/ երեսունհազար/ դրամ:
    - բգ/ 1001 և 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 50000/ հիսունհազար/ դրամ:

բ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 80000/ ութսունհազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 3000 / երեք հազար/ :

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 5000 / հինգհազար/ :

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների, վերկառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, էթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախաձեռնում:

ա/ Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով ընդհանուր օբյեկտի մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության համար - 3000 / երեք հազար/ դրամ:

բ/ Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության, սույն բացի սույն կետի “ ա ” ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության, սույն օրենքի իմաստով, այն սահմանվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է 3000 / երեք հազար/ դրամ:

1.2.3 կետերի սահմանված գործակցի կիտարմամբ:

դրույքաչափերը հաշվարկել 0.5

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երեք հազար/ դրամ:

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 300 /երեքհարյուր/ դրամ մեկ քառակուսի մետրի համար:

բ/ Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.0 /հարյուրհիսունհազար/ դրամ

գ/ Խանութներում, կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ

գա/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում - 3000 /երեք հազար/ դրամ

Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում - 1000/ հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շատրվի, խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24 -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ Առևտրի օբյեկտների համար 25,0/ քսանհինգհազար/ դրամ:

բ/ Հանրային սննդի և զվարճանքների օբյեկտների համար 50,0/ հիսուն հազար/ դրամ:

գ/ Բաղնիքների /սաունաների/ համար 200,0/ երկուհարյուրհազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետր տեղական տուրք սահմանել

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1000/ հազար / դրամ / Թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -2500 դրամ:  
գ/ այլ արտաքին գովազդի համար - 500 / հինգհարյուր/ դրամ:

դ/ դատարկ գովազդի վահանակի համար -700/ յոթհարյուր/ դրամ:  
8/ Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեղափոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտում շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000/ հինգհազար/ դրամ:

9/ Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափազրման և այլ նման աշխատանքների համար, համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 / հազար / դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 /հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երկօրյա տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000/ հինգհազար/ դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար՝ մասնակիցների վճար - 1000 / հազար/դրամ:

13. Աղբահանության համար սահմանել դրույքաչափ ամսեկան մեկ անձին համար 50 դրամ/հիսուն/ դրամ:

Ավագանու անդամներ

Կոչ ԴԵ  
Կոչ ԴԵ  
Կոչ ԴԵ

Ս. Ղազարյան  
Ա. Գազարյան  
Ֆ. Խաչատրյան

Ա. Դունոյան



ղեկավար

*[Handwritten signature]*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նիզամի  
☒ Հեռ. (0236) 4-34-42

« 25 » նոյեմբեր 2012 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Նո 20

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇԻՌՈՒՄ ԵՂԱԾ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » հայաստանի  
Հանրապետության օրենքի 16 հոդվածի 29 կետի

Ավագանին Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել համայնքի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների  
գույքագրման արդյունքները, համաձայն հավելված 1-ի:

Ավագանու անդամներ



Համայնքի

*Կոռն Բ*  
*Կոռն Բ*  
*Կոռն Բ*  
*Կոռն Բ*

Ա. Գազարյան  
Ֆ. Խաչատրյան  
Ս. Ղազարյան  
Ա. Դունոյան

Նիզամի համայնքի հաշվեկշիռում գտնվող հիմնական միջոցների  
գույքագրման արդյունքները

1. Գյուղապետարանի վարչական շենք	1	2180,9 հազ. դրամ
2. Հեռուստացույց	1	26,1 հազ. դրամ
3. Կենտրոնական փողոցի լուսավորություն		442,0 հազ. դրամ
4. Խոր. Տնտես. Գրասենյակի շենք	1	204,3 հազ. դրամ
5. Վազ 2121 Նիվա	1	500,0 հազ. դրամ
6. Գազի Խողովակ		30072,0 հազ. դրամ
7. Համակարգիչ	1	450,0 հազ. դրամ
8. Համակարգիչ	3	412,0 հազ. դրամ
9. Սեղան, աթոռ	11	38,0 հազ. դրամ
10. Բազկաթոռ	7	153, 0 հազ. դրամ
11. Քսերոքս	1	98,0 հազ. դրամ
12. Մսուր- մանկ. Շենք	1	2152,3 հազ. դրամ
13. Բակ. Խաղ. Կոմպլեքս	1	42,8 հազ. դրամ
14. Արտիզան	13	1340,3 հազ. դրամ
15. Կուլտուրայի տան շենք	1	2212,0 հազ. դրամ
16. Էլեկտրոնիկա ԵՄ-05	1	57,4 հազ. դրամ
17. Ֆոտոապարատ “Կիև”	1	42,0 հազ. դրամ
18. Մազնիտաֆոն “Մայակ”	3	56,6 հազ. դրամ
19. Հանգույց “Շմել”	1	42,0 հազ. դրամ
20. Սառնարան “Դնեպր”	1	29,7 հազ. դրամ
21. Պուլտ	1	58,5 հազ. դրամ
22. Գազի Վառարան	3	180,0 հազ. դրամ
23. Վազ 2121 Նիվա	1	5300, 0 հազ. դրամ
24. Պրինտեր	3	174,0 հազ. դրամ
25. Ավտոմեքենայի գազի բալոն	1	370,0 հազ. դրամ
26. Համակարգիչ	1	350,0 հազ. դրամ

Ընդամենը

47651,7 հազ. դրամ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նիգամի  
Հեռ. (0236) 4-34-42

« 25 » նոյեմբեր 2012 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Նո 21

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20 կետի

Ավագանին Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թույլատրել համայնքի ղեկավարին երկու ամսվա ընթացքում աճուրդով վաճառքի կարգով օտարել գյուղ. նշանակության 0,14627 հա այլ հող ն 0,14701 վարելահող գյուղ. Գործնություն ծավալելու համար :
2. Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով :
3. Օտարվող հողամասի մեկ լոտի նվազագույն չափը ընդունել ծածկագրի 0001-0081՝ 0,14627հա, 0019-0033՝ 0,09121 հա, 0025-0001՝ 0,0564հա չափով :

Ավագանու անդամներ



Ղեկավար

Կոչ Բ  
Կոչ Բ  
Կոչ Բ  
Ստեփանյան

Ա. Գազարյան  
Ֆ. Խաչատրյան  
Ս. Ղազարյան  
Ա. Դունոյան